

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-3-7-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2020 թվականի նոյեմբերի 16-ին արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված՝ «Պրեմիում ֆուդ» ՍՊԸ ընկերության (Երևան, Արշակունյաց 127/21, AM) «ararat coffee» (No20200050) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նիշը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան, քանի որ այն շփոթելու աստիճան նման է 30-րդ դասի ապրանքների համար գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետությունում պահպանվող «APAPAT КОНДИТЕРСКАЯ ФАБРИКА» («Արարատ» ՍՊԸ, ք. Երևան, 0061, Մասիսի 7, AM, N 8158, 11.06.2004) համակցված ապրանքային նշանին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի (այսուհետ՝ կարգ) 119-րդ կետի 2-րդ ենթակետի, 122-րդ կետի համաձայն բառային ապրանքային նշաններին նման են համարվում համակցված ապրանքային նշանները, որոնց մեջ ընդգրկված են բառային տարրեր, և որոնք ունեն ձայնային նմանություն: Տվյալ դեպքում համեմատվող բառային և համակցված ապրանքային նշանների «ararat» և «APAPAT» բառային տարրերը, չնայած գրելաձևի տարբերության, այն է՝ այբուբենի, որի տառերով գրված են բառերը, ունեն ճիշտ նույն հնչողությունը: Ինչ վերաբերում է «COFFE» և «КОНДИТЕРСКАЯ ФАБРИКА»

արտահայտություններին, ապա դրանք չունեն տարբերակիչ հատկություն, քանի որ Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 4-րդ կետերի և Կարգի 93-րդ կետի 3-րդ ենթակետի և 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն առաջինը նշում է ապրանքի տեսակը, իսկ երկրորդը իրենից ներկայացնում է համընդհանուր ընդունված անվանում, այն է՝ հաստատության պարզ նշում:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալու մասին, քանի որ բողոքարկողը ներկայացրել է Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 17.12.2021թ.-ին կայացրած և 19.01.2022թ.-ին օրինական ուժի մեջ մտած վճիռը այն մասին, որ հակադրված ապրանքային նշանի գրանցումը չեղյալ է հայտարարվել բոլոր ապրանքների համար, որոնց համար այն գրանցված է:

Բողոքարկողը համաձայն էր կոլեգիայի անդամի առաջարկի հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում միաձայն:

## **Ո Ր Ո Շ Ե Ց**

Ամբողջությամբ բավարարել արտոնագրային հավատարմատար Վանիկ Մարգարյանի կողմից ներկայացված «ararat coffee» (No20200050) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և ապրանքային նշանին իրավական պահպանություն տալ հայտարկված «սուրճ» ապրանքի համար:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ